«Խոր Վիրապ պետական արգելավայր» ջրաճահճային տարածքը մեծ նշանակություն ունի ջրլող և ջրամերձ թռչունների համար, որպես բնադրավայր և սեզոնային չոփ՝ հանգստավայր: Արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասում, Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի ավերակների աջակողմյան հատվածում: Արգելավայրը գրավում է 50,28 հա ճահճոտ տարածք և համարվում է «Միջազգային նշանակություն ունեցող»:

Ջրաճահճային տարածքը յուրահատուկ խոնավ միկրոկլիմա է ստեղծում, որի վկայությունն է չոր կլիմայական պայմաններում, ամառային երաշտի ժամանակ և նույնիսկ ձմռանը ջրաճահճային բուսականության վառ կանաչ գույնը, որն առանձնահատուկ գեղեցկություն է տալիս շրջակա միջավայրին: Խոր Վիրապի ջրաճահճային տարածքն առանձնանում է բնապահպանական, գիտական և ռեկրեացիոն բարձրարժեք նշանակությամբ, հատկապես որպես ջրլող թռչունների բնակմիջավայր:

Մասնավորապես, համաշխարհային վտանգված թռչուններից այստեղ բնակվում են մարմարյա մրտիմը (Marmaronetta angustirostris) և սպիտակագլուխ բադը (Oxyura leucocephalis), իսկ չոփ ժամանակ հանդիպում է գանգրափետուր հավալուսնը (Pelecanus crispus):

Հայաստանի կարմիր գրքում գրանցված տեսակներից այս տարածքում բնադրվում են փոքր ձկնկուլը (Phalacrocorax pygmaeus), մոխրագույն բադը (Anas strepera), ոտնացուպիկը (Himantopus himantopus), բզակտուցը (Recurvirostra avosetta), կապտափող սոխակը (Luscinia svecica occidentalis):

Գանգրափետուր հավալուսին

Հազվագյուտ և անհետացող թռչուններից հանդիպում են մեծ ձկնկուլը (Phalacrocorax carbo), մեծ սպիտակ տառեղը (Egretta alba), տարգալակտուցը (Platalea leucorodia), քաջահավը (Plegadis falcinellus), մոխրագույն սագը (Anser anser), խայտաբղետ բադը (Tadorna tadorna), լայնակտուց բադը (Anas clypeata), տափաստանային մկնաճուռակ (Circus macrourus), մարգագետնային մկնաճուռակ (Circus pygargus), Եվրոպական ճնճղաճուռակը (Accipiter brevipes), օձակեր արծիվը (Circaetus gallicus), սովորական մանրաբազեն (Falco vespertinus), ճախրուկը (Chettusia gregaria), կտցար–կաչաղակը (Haematopus ostralegus), ճահճային բուն (Asio flammeus), արևելյան կարմրագլուխ շամփրուկը (Lanius senator niloticus), ճուռականման շահրիկը (Sylvia nisoria): Տարվա տաք ամիսներին այստեղ սնունդ են հայթայթում Հայաստանի կարմիր գրքում գրանցված չղջիկները՝ մեհելի պայտաքիթը (Rhinolophus mehelyi), ասիական լայնականջ չղջիկը (Barbastella leucomelas), սովորական երկարաթև չղջիկը (Miniop–terus schreibersi):